որդւոց հետ, մայրերը աղջկանց հետ, առանց հոգս քաշելու իրանց անշարժ ստացուածքների մասին և գնացին ոմանք Ղարաբաղ, ոմանք Նախիջևան և ոմանք Երևան, ռուսաց սահմաններում հանգիստ առնելու Եգիպտական ծառայութիւնից, նորոգելու իրանց նախնիքների աւերակ քաղաքները, դաստակերտներն ու շէները։

Գ. Ք. Ա.

Ս. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐ

Մեծապատիւ Հօր Եփրեմայ

'Ի Ս. Նազարեանց ողջոյն.

Զգրեալս ի 15 մայիսի անցելոյ գիտեմ, ստացեալ Ձեր անշուշտ ձեռամբ պարոն Դաւթի Դիլանեան. վասն զի ընկալեալ է իմ վաղու զպատասխանի նամակիս առ նա, յորում առ եդեալ էր և Ձերն. այլ թէ զի՞նչ ինչ արդեօք խափանարկու ձեզ եղև ցարդ, պատասխանելոյ ինձ, անգիտանամ բնաւ։ Գուցէ դիպեցան ձեզ ինչ ինչ՝ որք կարող են 'ի չքմեղս գործել զլռելութիւն ձեր, և հաշտեցուցանել զմեզ ընդ ձեզ յանուն նախնի մերոյս բարեկամութեան։ Մեր գձնեայ անդորր է խիղճ՝ կատարելով զոր առ ձեզ պարտականութիւն բարեկամական, զմերն ասեմ ձեզ ուխտեալ գերմանական հաւատարմութեամբ։ Անցք նորանոր առ մեզ անցին, կատարեցան ուխտք սրտից մերոց, զհին աւուրցն ասեմ և զմեծափափագս. է՛, է՛ ապաքէն առիթ ուրախութեան մեզ՝ որք սիրողք են և ճանաչողք հայրենեաց։ Ունիմք արդէն կաթողիկոս զՆերսէս՝ այր այո՛ հանճարաւոր, ազգասէր և արժանաւոր քան զամենեսին՝ որ առ մեզ հոգևորականք։ Գուցէ՛ արասցէ սա ինչ ինչ ի պիտանեացն և ի կարևորաց մերոյս տառապեալ ազգի. յուսասցուք աղաչելով զԱստուած՝ զի յերկարեսցէ զամս կենաց պատուական ծերունւոյս։

Խնդիր իմ առ ձեզ առ ժամս է, զի յանուն մերոյ ճշմարիտ բարեկամութեան աշխատ լինիջիք օգնական ինձ լի-

նիլ յայսմ խրոխութեան։ Աշխատասիրեալ իմ ի Հայ լեզու համառօտ ինչ տեսութիւն աշխարհահամար պատմութեան, ցանկայի ի տիպ գնա արձանացուցանել. բայց ունայն ի հարկաւորացն առ այն դրամոց, կամ ցարդ պարանեալ յանել տարակուսանս. Որչափ գեղեցիկ և օգտակար լինէր տպաքէն, եթէ հնար էր ձեզ ի մէջ Հայոց Պետերբուրղայ գտանել զոմանս կամեցողս ստանալոյ զայս մատեան բովանդակեալ ի 10 քառածալ թերթս կամ ի 80 երեսս կամ անդր և դրեալ մանրաձեւն, վասն որոյ առաքեմ Ձեզ ընդ սմին զթերթն թղթոյ՝ ուր մարթ էր ցանկացողացն ստորագրեալ զանուանս իւրեանց և զհասցէս՝ վճարելով ընդ նմին և զգինն՝ որ է $1^1/_2$ մանէթ արծաթ. 'ի մտունիմ ի տիպ մուծանել զմատեանս ի Կազան՝ ուր է ցարդ տպարան Հայոց։ Առ ժամս շատացեալ գրելովքս մնամ և յարամնամ

Ի 8 Մայիսի
1843
Ի Կազան

յաւիտեան
Ձեր հարազատ
Ս. Նազարեանց։